



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

5 սեպտեմբերի 2022թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Է. Շաթիրյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Նարեգ և Սարո Հարթունյանների անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

#### Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Նարեգ և Սարո Հարթունյանների դիմումը (ներկայացուցիչ՝ Վ. Հակոբյան) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի օգոստոսի 3-ին, որով դիմողները խնդրել են.

«(...)

01.01.1999թ. ուժի մեջ մտած և 07.05.2015թ. խմբագրությամբ գործող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության, 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթները ԵԿԴ/2711/02/10 գործով Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

2. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը և 228-րդ հոդվածի 2-րդ

մասի 2-րդ կետն իրենց նկատմամբ կիրառվել են այն մեկնաբանությամբ, որ հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում դատարանի պարտականությունն է ծանուցել ոչ միայն այդ հատուկ վարույթով գործի շրջանակներում գործին մասնակցող անձի կարգավիճակ ունեցող անձանց, այլև այն անձանց, որոնք գործին մասնակցող անձի կարգավիճակ են ունեցել այն գործով, որով կայացվել է վերանայման ենթակա դատական ակտը, իսկ տվյալ պարտականությունը չկատարելը դատավարական իրավունքի էական խախտում է և բոլոր դեպքերում վճռի բեկանման հիմք:

Դիմողները նշում են. «(...) դիտարկելով վիճարկվող դրույթները՝ Որոշմամբ դրանց տրված մեկնաբանությամբ, հանգում ենք հիմնավորումից ու բացատրությունից զուրկ մի եզրակացության, որ դատարանի պարտականությունն է ծանուցել ոչ միայն տվյալ (ընթացիկ) գործի շրջանակներում գործին մասնակցող անձի կարգավիճակ ունեցող անձանց, այլև՝ մեկ ուրիշ գործի: Այդպիսի պարտականությունը և, որ կարևոր է, այդ պարտականությունը չկատարված լինելու հիմքով գործը նոր քննության ուղարկելը չունի որևէ նպատակ կամ իմաստ, չի բխում որևէ բանական նկատառումից: Ողջամիտ հարց է առաջանում. եթե որևէ անձ տվյալ գործին մասնակցող անձի կարգավիճակ չունի, ինչու՞ պետք է նա ծանուցվի դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին: Նման ծանուցման պարտականությունը կարելի է բնորոշել հենց վերը բերված ածականներով՝ «անհարկի», «ավելորդ», «անտեղի», «անօգուտ», «զուր»:

Դիմողների պնդմամբ՝ խախտվել է իրենց՝ գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, քանի որ դատարանի՝ տվյալ գործով գործին մասնակցող անձի կարգավիճակ չունեցող և միաժամանակ դիմողների հետ անմիջական պարտավորական հարաբերություններ չունեցող անձին ծանուցելու պարտականությունը և այդ պարտականությունը չկատարելու հետևանքները բացասաբար են ազդում դիմողների գործի քննության տևողության վրա: Դիմողների գնահատմամբ՝ եթե վիճարկվող դրույթները չկիրառվեին վերը ներկայացված մեկնաբանությամբ, Վճռաբեկ դատարանը կմերժեր վճռաբեկ բողոքը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.08.2016թ. վճիռը թողնե-

լով անփոփոխ. դրանով՝ դիմողների մասնակցությամբ հաշտության համաձայնությունը վերջնականապես կհաստատվեր: Մինչդեռ գործի քննությունն անհարկի ձգձգվել է, ինչը, դիմողների եզրահանգմամբ, հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Ըստ դիմողների՝ դատական գործի անհարկի ձգձգումը բացասաբար է ազդում նաև անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության վրա, այսինքն՝ հակասում է նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և խախտում է դիմողների դատական պաշտպանության իրավունքը:

**3.** Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանություններով.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունը մերժելու մասին որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:**

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ Սահմա-

նադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չի ենթադրում անձի՝ իր հայեցողությամբ ցանկացած միջոցի կամ ընթացակարգի ընտրության հնարավորություն: Այդ միջոցներն ու ընթացակարգերը սահմանված լինելով օրենքներով՝ իրավաբանական նշանակություն ունեցող համապատասխան դեպքերի, փաստերի առկայության պարագայում նախատեսում են անձի խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանության կոնկրետ ձևեր ու եղանակներ:

Վերոնշյալ որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով վերապահված իր իրավունքի շրջանակներում՝ Օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական պաշտպանության իրավունքը և դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված) գործընթացներ և պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով:

Նշված աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Ակնհայտ անհիմն են նաև այն դիմումները, երբ նույն դիմողը միևնույն «հիմնավորումներով» և «փաստարկներով» վիճարկում է այն նույն դրույթի սահմանադրականությունը, որի հիման վրա գործի քննության ընդունումը մերժվել (...) է (...) սահմանադրական դատարանի կողմից»:

Վերոգրյալից բխում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքը, չի ենթադրում միևնույն «հիմնավորումներով» և «փաստարկներով» նույն դատական գործի շրջանակներում կիրառված նույն դրույթի սահմանադրականության վիճարկման վերաբերյալ բազմաթիվ դիմումների ներկայացման հնարավորություն, երբ դրա վերաբերյալ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի դատական կազմի կամ աշխատակարգային որոշում:

Դիմողների կողմից թիվ ԵԿԴ/2711/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության և 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սահմանադրականության վիճարկման վերաբերյալ անհատական դիմում է ներկայացվել Սահմանադրական դատարան նաև 2022 թվականի հունիսի 15-ին, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 8-ին կայացրել է «Նարեգ և Սարո Հարթունյանների դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության, 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին ՍԴԱՌ-119 աշխատակարգային որոշումը՝ մերժելով Նարեգ և Սարո Հարթունյանների կողմից ներկայացված անհատական դիմումի ընդունումը՝ դիմումում առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու և անհատական դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքերով:

2022 թվականի օգոստոսի 3-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Նարեգ և Սարո Հարթունյանների սույն անհատական դիմումը, որով կրկին վիճարկվում է թիվ ԵԿԴ/2711/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում իրենց նկատմամբ կիրառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության և 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համապատասխանությունը Սահմանադրությանը: Ընդ որում՝ օգոստոսի 3-ին մուտքագրված դիմումում կրկնվում են ՍԴԱՌ-119 աշխատակարգային որոշմամբ մերժված նույնաբովանդակ անհատական դիմումի հիմնավորումները:

Այսպիսով, 2022 թվականի օգոստոսի 3-ին Նարեգ և Սարո Հարթունյանների կողմից Սահմանադրական դատարան մուտքագրվել է ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության և 228-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սահմանադրականության վիճարկման վերաբերյալ նույնաբովանդակ անհատական դիմում, որի ընդունումը ենթակա է մերժման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

Նարեգ և Սարո Հարթունյանների անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝  
Անդամներ՝



Է. Շաթիրյան  
Ա. Խաչատրյան  
Վ. Գրիգորյան

5 սեպտեմբերի 2022 թվականի  
ՍԴԴԿՈ- 46